ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ. (+374 11) 514 200, Ֆաքս՝ (+374 11) 514 004, էլ.փոստ՝ mayor@yerevan.am

N 01/61-9643

«10» 06 2020 թ.

«ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Ն. ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻՆ
ք.Արտաշատ, Օգոստոսի 23 փող.21/3ա

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ ընկերություն) միջև 17.02.2020 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/10» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի թվով 26 չկարգավորվող հետիոտնային անցումները «Հետիոտնային կանչի» ռեժիմով աշխատող լուսացուցային համակարգերով կահավորելու նշված համակարգերի տեղադրման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի աշխատանքներ կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով»:

Պայմանագրի N 1 հավելվածով աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ, որը ավարտվում է 01.04.2020 թվականին, սակայն ընկերության կողմից սահմանված ժամկետում պայմանագրով ստանձնած պարտավորությունները չեն կատարվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Վերը նշված պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը:Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է աշխատանքների կատարման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է Ընկերության հետ կնքված գնման աշխատանքների պայմանագրից՝ համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ

Կատարող՝ Է. Կիրակոսյան
011 514-129